Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/5-07/16 ծածկագրով «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 1 հունիսի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

Շ. Զուրաբյանը - ՀՇԳՅԷ-ի Ջ և ՀՄԱ-ի պետ(նախագահ)
Ա. Չոբանյանը - Գլխավոր հաշվապահի տեղակալ
Ա. Պետրոսյանը - ՊԲ-ի առաջատար մասնագետ (քարտուղար)

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Է. Սանամյանը:

Նիստին ներկա էին «Խատիս» ՍՊԸ-ի լիազորված անձ Կարեն Մաշուրյանը, «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի լիազորված անձ Էդգար Թագեյանը, «Յունիքիմ» ՍՊԸ-ի լիազոր անձ Վաղուժ Օհանյանը:

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/5-07/16 ծածկագրով գնման ընթացակարգի ներկայացրած հայտերի մասին:
2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրաված տեղերի և մասնակիցներից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին:
3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ՇՀԱՊՁԲ 15/5-07/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել չորս կազմակերպություն՝
- «Յունիքիմ» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արշակունյանց 278),
- «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արգումանյան 19/67)
- «Խատիս» ՍՊԸ – (հասցեն՝ ք. Երևան, Վ. Փափազյան 13/4)
- «Մեղիսար» ՍՊԸ - (հասցեն՝ ք. Երևան, Գետառի 4/9)

1.2. «Յունիքիմ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.3. «Յունիքիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված հավելվածները, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.4. Ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5 Ներկայացված գնային առաջարկը հետևյալն է՝

ՀՀ դրամ

| Չափ. համարը | Ապրանքի անվանումը | Գումարը | ԱԱՀ | Ընդամենը | Որ երկրի արտադրանք է |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ծծմբական թթու | 8 073 000 | 1 614 600 | 9 687 600 | ԻԻՀ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Կաուստիկ սոդա | 4 650 000 | 930 000 | 5 580 000 | ԻԻՀ |
| 4 | Նատրիումի մետաբիսուլֆիտ | 25 000 | 57 500 | 345 000 | ԻԻՀ |
| 5 | Ալյումինիում ծծմբաթթվական | 137 500 | 27 500 | 165 000 | ԻԻՀ |
| 6 | Նատրիումի հետամեքսաֆոսֆատ | 480 000 | 96 000 | 576 000 | ԻԻՀ |

1.6. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.7. «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.8. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.9. Ներկայացված գնային առաջարկը հետևյալն է՝

ՀՀ դրամ

| Չափ. համարը | Ապրանքի անվանումը | Գումարը | ԱԱՀ | Ընդամենը | Որ երկրի արտադրանք է |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աղաթթու | 116 666,67 | 23 333,33 | 140 000 | ՌԴ |
| 2 | Ծծմբական թթու | 7 735 000 | 1 547 000 | 9 282 000 | ԻԻՀ |
| 3 | Կաուստիկ սոդա | 4 950 000 | 990 000 | 5 940 000 | ԻԻՀ |
| 4 | Նատրիումի մետաբիսուլֆիտ | 312 500 | 62 500 | 375 000 | ՌԴ |
| 5 | Ալյումինիում ծծմբաթթվական | 229 166,67 | 45 833,33 | 275 000 | ՌԴ |
| 6 | Նատրիումի հետամեքսաֆոսֆատ | 591 666,67 | 118 333,33 | 710 000 | Չինաստան |

1.10. «Իսատիս» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:

1.11. «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:

1.12. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.13. Ներկայացված գնային առաջարկը հետևյալն է՝

ՀՀ դրամ

| Չափ. Համ. | Ապրանքի անվանումը | Գումարը | ԱԱՀ | Ընդամենը | Որ երկրի արտադրանք է |
|---|---|---|---|---|---|
| 2 | Ծծմբական թթու | 7 735 000 | 1 547 000 | 9 282 000 | ԻԻՀ |
| 3 | Կաուստիկ սոդա | 4 950 000 | 990 000 | 5 940 000 | ԻԻՀ |

1.14. «Մեղիսար» ՍՊԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն, հեռախոսը:
1.16. «Մեղիսար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, չի ներկայացրել հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:
1.17. Ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, երկու պատճեն:
1.18. Ներկայացված գնային առաջարկը հետևյալն է`

ՀՀ դրամ

| Չափ. համարը | Ապրանքի անվանումը | Գումարը | ԱԱՀ | Ընդամենը | Որ երկրի արտադրանք է |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աղաթու | 116 666,67 | 33 333,33 | 200 000 | ՌԴ |
| 4 | Նատրիումի մետաբիսուլֆիտ | 250 000 | 50 000 | 300 000 | Չինաստան |
| 5 | Ալյումինիում ծծմբաթթվական | 116 666,67 | 33 333,33 | 200 000 | ՌԴ |
| 6 | Նատրիումի հետամեքսաֆոսֆատ | 458 333,33 | 91 666,67 | 550 000 | Չինաստան |

Հարց 2: Հրավեր ներկայացրած մասնակիցների գրաված տեղերի և մասնակիցներից համաձայն հրավերի պահանջվող փաստաթղթերի մասին

Հանձնաժողովը որոշեց`
1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հիման ըստ չափաբաժինների բաշխել հետևյալ կերպ`

| | Գրաված տեղերը | Մասնակցի անվանումը | Առաջարկված գումարը(ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1-ին չափաբաժին | Առաջին տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 140 000 |
| | Երկրորդ տեղ | «Մեղիսար» ՍՊԸ | 200 000 |
| 2-րդ չափաբաժին | Առաջին տեղ | «Իսատիս» ՍՊԸ | 8 892 000 |
| | Երկրորդ տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 9 282 000 |
| | Երրորդ տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 9 687 600 |
| 3-րդ չափաբաժին | Առաջին տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 5 580 000 |
| | Երկրորդ տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 5 940 000 |
| | Երրորդ տեղ | «Իսատիս» ՍՊԸ | 6 072 000 |
| 4-րդ չափաբաժին | Առաջին տեղ | «Մեղիսար» ՍՊԸ | 300 000 |
| | Երկրորդ տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 345 000 |
| | Երրորդ տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 375 000 |
| 5-րդ չափաբաժին | Առաջին տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 165 000 |
| | Երկրորդ տեղ | «Մեղիսար» ՍՊԸ | 200 000 |
| | Երրորդ տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 275 000 |
| 6-րդ չափաբաժին | Առաջին տեղ | «Մեղիսար» ՍՊԸ | 550 000 |
| | Երկրորդ տեղ | «Յունիքիմ» ՍՊԸ | 576 000 |

| | | | |
|---|---|---|---|
| | Երրորդ տեղ | «ԹԱԳ ՀԷՄ» ՍՊԸ | 710 000 |

2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Համաձայն ՀՀ կառավարության որոշմանը կից հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45 կետի պահանջել «Մեղիսար» ՍՊԸ-ից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով պահանջվող լիցենզիայի պատճենը:
- ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի և մասնակիցների կողմից զբաղված տեղերի մասին արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ զբաղված մասնակիցներին, ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համապատասխան երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու հրավերով սահմանված թիվ 5 հավելվածը, առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը և նախորդ երեք տարիների ընթացքում նմանատիպ պայմանագրերի պատճենները;:

Հարց 3. ԵՐԶԷԿ ՇՀԱՊՁԲ 15/15-07/16 ծածկագրով շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներից «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն արձանագրության 2-րդ կետով պահանջվող փաստաթղթերը մասնակցներից և ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցումն

ստանալու օրվան հաջորդող օրը հանձնաժողովի անդամներին տրամադրել գնահատման թերթիկների երկուական օրինակ:

- Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Շ. Զուրաբյան

Անդամ՝ Ա. Չոբանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան